ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» հունիսի 2016 թվականի N231-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՏՈՒՖԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016

թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Տուֆաշեն համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 12-ի N16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Տուֆաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի մարտի 2-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2016 թվականի մարտի 2-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, Նարինե Զարչյանի 2016 թվականի փետրվարի 26-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Տուֆաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Արտուշ Աղաքարյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Էդվարդ Սիմոնյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Տուֆաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Գայանե Ղուլիջողյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամ Շուշանիկ Գևորգյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի նոյեմբերի 14-ին Խորհրդի կազմում հաստատված Նարինե Զարչյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2014 թվականի նոյեմբերի 14-ին Խորհրդի կազմում հաստատված Սամվել Մարտիրոսյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի նոյեմբերի 14-ը:

4. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի նոյեմբերի 14-ին Խորհրդի կազմում հաստատված Լուսինե Գալստյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի նոյեմբերի 14-ը:

5. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի նոյեմբերի 14-ին Խորհրդի կազմում հաստատված Ջեմմա Ավետիսյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի նոյեմբերի 14-ը:

6. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Ռուստամ Մաթիլյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Էդվարդ Սիմոնյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Տուֆաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արտակ Եգորյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Շուշանիկ Գևորգյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Հերմինե Հակոբյանին:

7. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

8. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N98 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «21» N231-կ որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՏՈՒՖԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Մաթիլյան Ռուստամ	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Սիմոնյան Էդվարդ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Մարտիրոսյան Սամվել	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Եգորյան Արտակ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Գալստյան Լուսինե	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Գևորգյան Շուշանիկ	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Ավետիսյան Ջեմմա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Հակոբյան Հերմինե	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան
Իսկականի հետ ճիշտ է